ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Որոշման նախագիծը կազմվել է ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 6.1 մասերի պահանջներով, համաձայն որի համայնքի ղեկավարի փոփոխության դեպքում համայնքի ղեկավարի տեղակալները, որպես ժամանակավոր պաշտոնակատարներ շարունակում են պաշտոնավարել մինչև իրենց պաշտոնում նոր նշանակում կատարելը կամ նոր նշանակման (վերանշանակման) կատարման համար սույն մասով սահմանված ժամկետի ավարտը: Համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնում նոր նշանակումը կատարվում է համայնքի ղեկավարի պաշտոնի ստանձնման օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում: ժամանակավոր պաշտոնակատարն առանց ազատման վերանշանակվում է իր պաշտոնում կամ ազատվում է զբաղեցրած պաշտոնից նոր նշանակում կատարվելու դեպքում:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Դ. Հարությունյան

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծի ընդունման դեպքում համայնքի բյուջեի ծախսերի և եկամուտների փոփոխություն չի լինի, քանի որ բյուջեի աշխատակազմի աշխատավարձի ֆոնդում համապատասխան միջոցներն արդեն իսկ նախատեսված են:

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Դ. Հարությունյան